

Եւ երբ նոյն հետքերուն բոլոր հողերը կը վերցնէին՝ դարձեալ անոնք կարծրագոյն քարերու վրայ կը ներտպուէին՝ ըստ մարգարէութեան Զաքարիայի (ԺԴ . 4) «Եւ կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի լերինն Ձիթենեաց հանգէպ Երուսաղէմի յարևելից» (Բ . Ս . Ե . էջ 95) :

Յուստինիանոսի շինած Ս . Աստուածածնի տաճարը արարները մզկիթի վերածելով կոչեցին Ճամիկ - Ազաս (հեռագոյն մզկիթ), վասնզի ան խաւամական հիւսիսային երեք գլխաւոր մզկիթներէն աւելի հեռու կը գտնուի :

Իսլամները այս մզկիթին մէջ կը յարգեն տեղ մը ուր կ'ըսուի թէ կայ Յիսուսի *nslemstehin*՝ համաձայն այն աւանդութեան թէ Յուստինիանոս իր շինած եկեղեցին աւելի պատկառելի ընելու համար Ձիթենեաց լեռնէն փոխադրել տուած է մէկ մասը այն ժայռին որ պահպանած է մեր Փրկչին աջ ոտքին դրոշմը (Mis. հատ . Բ . էջ 531) :

Կ'ըսուի թէ այս քարին երկայնութիւնն է չորս կանգուն և նոյնչափ լայնութիւնը եւ վանդակապատ կը պահուի (Արժ . էջ 17) :

Ուխտաւոր ուղեգիր մը կը յիշէ այս պարագան եւ կը մանրամասնէ Քրիստոսի ոտքերուն հետքի աւանդութիւնը . «Քրիստոսի Համբարձման ժամանակ, Անոր երկու ոտքերուն հետքի աւանդութեան մասին շատ դարերէ ի վեր խօսուած է, բայց միայն մեկ ոտքին համար, վասն զի միւսը տարուած էր Ազսայի մզկիթը : Երբեմն անոնք կը նկարագրուին այնպէս՝ որպէս թէ Քրիստոս իր գէմքը կ'ուղղէ դէպի հարաւ՝ ըստ այլ տեղեկութեանց՝ ուրիշ ուղղութեամբ : Առաջին դարերուն այն հետքերը կը մնային հողին վրայ,